

ՊՈՒԼԿԱՐԻԱ

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Տարեկան 8 Ֆր.
Վեցամսեայ 4 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ

Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. Տօլ.
Վեցամսեայ 1. Տօլ.

ԿԱՆԻՍԻԿ

ԽԱՆՈՒՑԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵՆ.

rev. Père G. Kalemkarian Michitar
tengasce № 4

ՀԱՍՏԷ

Rédaction du Journal

"Ira vounk"

Varna


Редакция на

Вѣстникъ

"Иравуникъ"

Варна

Գրոշքիւնք եւս չեն
տրոշիր



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՓԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՇԱՐԱԹ ՕՐԵՐ

ԵՐԱՆԻՍԻԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Օսմ. Երեսփ. ժողովը եթէ իրա կանխ մէջ սոսկ խրոտիլակ մըն է, պարզապէս ժէժ-թիւրք գո՞ժիթէին կանխորոշ ցանկութիւններուն օրէնքի ձեւ տալու սահմանուած, գոնէ տեսականին մէջ՝ չընորհիւ ընդդիմադիր փոքրամասնութեան հայերի մըն է՝ թուրք վարիչ տարրին մինչեւ ծածը բանա՞ծ փտախորը ի տեմ բերող արսայողացողը:

Օսմ. Բաղլամանի մէջ անցած դարձած դէպքերուն և արտաքինութիւններուն ուշադիր հետեւող մը դիւրաւ կրնայ սա գաղափորը կազմել, թէ հին և նոր թուրքերուն մէջ խիստ աննշան է տարբերութիւնը պետական գանձը անխզճօրէն և անհաշիւ կերպով մոխիրու մասին, եւ իմաստական նախարարին ներկայացուցած ելմտացոյցը, և թեր ու դէմ արտասանուած ճառերը թուաշանեւորով ցոյց տուին թէ 33 միլիոն սոկիի չափ տարեկան պիւտճէ մը ունեցող Օսմ. Պետութեան հասոյթներուն մէկ քառորդը յատկացուած է բոլորովին անօգուտ և ապրադիւն մոխրամեծու կամ աւելի ճիշդը՝ թուրքիան ներկայ անանկ արիւնաքամ ու յետագէմ վիճակին հասցնող մեղապարտ տարրերուն սնուցման, օրինակ բացի վեհապետէն, անթիւ անհամար իշխանազաններու առատ և ձրի տարբերակներ, հին ու ժամէ մնացած ապիկար բերաւոր նախկին պաշտօնեաներու հանգստեան թոշակ, մարդիկ որոնք 30 տարիներէ ի վեր ժողովուրդը կողպտած, կեղքքած և հոկայ հաստութիւններ գիղած են, յոյնպէս նախկին զինո զորահաններու որոնք բազմ չինած են այդ ապարէզին մէջ, և այսօր շուայօրէն իշխանական կեանք կը վարեն, նաեւ կարգ մը այրի կիներ, ո՞րոնք նա նախկին պաշտօնէից կիները ըլլալով արգէն գէթ կոկիկ հարստութիւն մը ժառանգած են, Ութ ինը միլիոն սոկիի հասնող այս օրինակ ապարգիւն մոխրամեծու և կուսակիցներ

գալըրմիշ ընելու համար հաստատուած անպէտ գրասենեակներու ծախքերը որոնց բոլորն ալ զուտ թուրքերու յատկացուած են, պետութեան տարեկան պիւտճէին վրայ անգին բաց մը կը բերեն, այնպէս որ եւ ինքն իրական զարգացման, կրթութեան, արհեստից և երկրագործութեան յառաջողման սատարելու համար կոկիկ գումար մը յատկացնելու անկարելիութեան առջեւ կը գտնուին, եւ այս խեղճութիւնը կը չարունակուի պարզապէս բերաւոր և ձրիակեր քաղաքացի թուրքեր սնուցանելու համար, իսկ գիւղացի և ոչ-թուրք հպատակները չարաչար կը տքնին կուսաքառին բերաւոր—բայց միայն պետական ուժով յարգարելի խոշորոտներու դէմ պարզապէս տուրք վճարելու և աւելցածովը չոր հաց մը ճարելու համար իոկ իրենց զաւակները կը մեծցնեն զինուոր տուլու, որ Արաբիոյ անապատներուն մէջ արեւակէզ կամ գնդակահար մահանանրփոռ ժէժ թուրք ազգայնամուտութեան:

Թեան. Եթէ մէնի ապստամբութիւնը կը շարունակուի սխրալիօրէն, Օսմանեան և վարձու օտար նաւեր երկրին այլ և այլ կէտերէն հազարաւոր զինուորներ բեռնուած եթէ մէն առաջնորդող չմին վրայ չիրար կը հետապնդեն, 60.000 պիտի հասնի կըսուի նոր զրկուող զինուորներու թիւը, անկէ վերջ է որ բուն յարձակումը պիտի օկըսի իմամ Նահեայի և Սէյիտ Իտիքիսի բանակներուն դէմ, Այն ատեն ալ Ա. արիոյ անյաղթելի զօրավարը «Ժէնէրալ Ամառ» պիտի ցցուի օսմանեան բանակին դէմ, ինչպէս որ ատենօք Ն. քոլիօնի դէմ ցոյուեցաւ Ռուսիոյ մէջ «Ժէնէրալ Չմեռը»:

Այս անյաղթելի թշնամիին սարսափը այժմէն զգալով ժէժ թուրք կառավարութիւնը, սկսած է մասամբ զոհացում տալու միջոցներու վրայ մտածել, նախորդ դահլիճներուն պատրաստած եթէ մէնի ներքին ինքնավարութեան ծրարգիրները մէկդի ձգուելէ վերջ

այս անգամ ճարահատուած Հագդը փաշայի գահիճը ինքզինք պարտաւոր կը զգայ նոր ծրագիր մը մէջ տեղ դնել եթէ մէնի Արաբները սիրաշահելու մտօք: Ահա այդ ծրագրին կարեւոր կէտերը որ կը քաղենք պատական թերթերէ: «Տէրսիմի երեսփոխան Լուիֆի Թիքրի պէյ ներսի. Ժողովին ներկայացուց Նմէնի բարենորոգմանց մասին օրինադիմ մը, որ հիմա կը ըննուի օրինադիմերու յանձնաժողովին կողմէ: Լուիֆի Թիքրի պէյ կ'ընենուի տեղական բաւական ընդարձակ ինքնօրինութեան մը հիման վրայ, ու գլխաւոր իշխանութիւնը կ'ազդմեն կուսակալն և Ընդհ. Ժողովը մը: Կուսակալը, որուն պաշտօնը բուն իսկ կուսակալի իրաւասու թեանց սահմանները կ'անցնի, Կայսեր կողմէ կ'անուանուի և ի հարկին վարչապէս պաշտօնանկ կ'ըլլայ: Սանաա պիտի հաստատուի և նահանգի ինքնութեանց համար: Խորհուրդին անունը պիտի ըլլայ զիւսանապետաց Ժողով (Մէճլիսի Բուլետա). կ'ընենք ժամանակին Արեւելեան Բուլետի կուսակալին մօտ գտնուած Խորհուրդը: Կուսակալն ուղղակի կ'ախուժ պիտի ունենայ վարչապետին, որուն միայն պիտի դիմուի կուսակալին դէմ որ և է բողոքի համար: Նահանգին պաշտօնատարները, ընդհ. Ժողովին կողմէ քուէարկուելիք օրէնքի մը համաձայն, պիտի անուանուին կուսակալին և Խորհուրդին կողմէ: Ը. դ. Ժողովը պիտի կազմուի ցեղապետներէն, որք ամէն տարի պիտի զուարթուին կուսակալին նախագահութեամբ, իբրեւ ընտրուած անգամ պիտի գտնուին ներկայացուցիչներն այն քաղաքներուն ուր ցեղի կազմակերպութիւն չկայ: Այդ քաղաքները 5000 բնակչի համար մէկ երես. փոխան պիտի ընտրեն, կուսակալին կողմէ պատրաստուելիք կ'անանագրի մը համաձայն: Նահանգին բարձրատիճան պաշտօնատարներն ալ ի պաշտօնէն անգամ են ընդհ. Ժողովին: Կուսակալին նաեւ իրաւունք ունի պաշտօնի կողմ կրօնական իրաւաբանութեան հըմուտ անձեր (Սէյիտ) երեք տարուան համար: Ատոնց թիւը Ժողովին անդաւան մէկ քաղաքէն աւելի պիտի չըլլայ: Կուսակալը կ'անուանէ Ժողովին նախագահն ու զերենախաղաչը: Կուսակալը բացարձակ «վէթօ» իրաւունք ունի Ժողովին բոլոր որոշմանց համար: Կ. Պալատը պետական Խորհուրդը կրնայ ջնջել նոր Ժողովին կողմէ արուած

այն որոշումներն որք անհամապատասխան ըլլան օսմ. Սահմանադրութեան կամ գաղափարութեանց: Ընդհ. Ժողովին կ'պառկանին նահանգին վարչական ելմտական, դատական ու քաղաքացիական գործերը: Կեդր. կառավարութիւնը նահանգին կ'ուսակալն բացը պիտի գոցէ մինչև 100.000 սոկի: Հասոյթներն եթէ աւելի ըլլան, յաւելեալ մասն կ'ուսակալն գանձուի պիտի վերաբերի:

Ապահովապէս, եթէ մէնի այդ կուսակալը իմամ Նահեան պիտի ըլլայ, իսկ Ասիոյ կողմին համար Սէյիտ Իտիքիսի, Ըստ արուած աննշան տարբերութեամբ մը նախորդ վարչապետ Թէրիտ և Հիւսէյին Հիլմի փաշաներու ընել ուղղուած այժմ ընել ստիպուած է ժէժն թուրքերու ներկայ ազգայնամուտ գահիճը, բայց այնչափ վատնումներ յետոյ, Այս իրենց լաւ գաւա մըն է: Ժէժները թող հասկնան թէ ո՞ւր որկրամուլ իր գլուխէն մեծ պատառ կ'ըլլու կարող չէ:

Ե. ԳՈՒՐՈՒՆԻ

ԿՐԵՏԵԼՆ ՆԱՄԱԿ

ՀՈՆ ԱԼ ՏԱԿԱՒԻՆ ՀԱՅԱԿԵՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԻՔԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Հանրա (Կրէտէ) 1911 Յունուար 29
Տէր խմբագիր
Հանգեք 26րդ ազգագուտ Իրաւունք թերթին մէկ անկիւնը հիւրընկալել: Բնիկ Պուրաւասի Աղաւնի Էսկիշէնէլեան Տիկիւնը, իւր ամուսինէն զըմգո՞ մնալով, կատարուի իր երկու փոքրիկներովն հեռանալ հայրենիքէն, այլ չեղեր չընելէ վերջ երկու տարի առաջ հոս եկաւ. իրեն և փոքրիկներուն օրապարիկը ճարելու համար նըշանաձգութեան խանութ մը բացած էր: Նամակաթուէս ճիշտ 10 օր առաջ 13 տարեկան թիւրք տղայ մը նշան նետած միջոցին կինը յանկարծամա՞ կ'ըլլայ, տղան բռնելով անմիջապէս կը բանտարկեն իսկ հանգուցեալին յուղարկաւորութիւնը կառավարութիւնը կառավարութիւնը տարեց: Միայն սա ցաւալի էր որ այս կինը նուրի անուամբ թիւրքի մը հետ կը սիրահարուէր. այդ պատճառաւ փոքրիկներն ալ թուրքին տունը կը մնային: Տեղւոյս գաղթական հայերս՝ գաղթիք թիւրքին դիմեցինք աղաքը առնելու համար. փոխադարձաբար պատասխանեց թէ տալքը ոչ խաչ հանել գիտեն և ոչ ալ հայերէն խօսել: Եւս աղաքը Իզմիր վալի փաշային պէ

տի դրկեմ տեսնելով որ մեր ձայնը անյը սելի մնաց ստիպեալ եղանք կառավարութեան դիմել. վերջապէս կառավարութիւնը ամէն ջանք ու աշխատանք չ'իշխայց՝ աղաքը այդ պաշտօնին ճիւղանէն առնելով մեզ յանձնեցին. Այս բոլոր եղանակները անմիջապէս Գանտի արժանապատիւ Տ. Յովհաննէս Բ. Պոլսեանի և Թաղ. Խորհրդոյ իմաց տուինք յիշեալ քահանայ տնօրէնապէս հոս եկաւ. աղաքը Տէր հօր յանձնեցինք որ Գանտի տանի. և անկից ալ պէտք եղած տեղը դիմեն:

Մնաք յարգանքով Ձերդ
Զաւարիայ Վ. Տ. Մկրտիչեան
Բնիկ Բէմից:

ՃՈՒՍԼԱՅԻ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Մեր լընթերցողներուն փոքր ի շատէ ծանօթ է թէ Շուվայի Ազգ. վարժարանի տնօրէն Պ Յակոբեանի դէմ դժգոհութիւն կայ տեղւոյն ազգայնոց և նոյն իսկ վարժարանի պաշտօնէից մէջ. Այս անգամ նամակ մը ստացանք նոյն տնօրէնի կնոջմէն՝ որ նաև ուսուցչուհի է հոն. Որչափ որ նամակագիր տիկինը նոյնութեամբ հըրատարակել խնդրած էր, բայց մենք խնայելով իրեն ու մեր սիւնակներուն, չենք հրատարակեր այն տեսակ նամակ մը որ մեծու մասամբ ամէնատեղի բառերու կոյտ մըն է և որ ոչ ըստորագրողին և ոչ հրատարակողին պատիւ կը բերէ, երբ մանաւանդ զայն ստորագրողը գեղեցիկ սեռին կը պատկանի և միանգամայն նոր սերունդ մը դատարարակել կոչուած է. այլ հոս կ'ամփոփենք այն նամակին բուն իմաստը, որ սա է.

Շուվայի Թաղ. Խորհրդը 5-6 ամիսէ ի վեր թռչակ չէ վճարեր ուսուցչիներուն, ըստ Տիկին Յակոբեանի, որ ստիպուել է դատարանի դիմել. նոյնպէս վարժարանին փոյտ չէ առնուել և ցուրտի պատճառաւ քանի մը օր փակուած մնացեր է Ազգ. վարժարանը:

Եթէ ստոյգ են այս տեղեկութիւնները, իրօք ցաւալի է, և անտարակոյս պատճառի մը հետեանք, բայց ալ դատաւարը ինչ որ ալ եղած ըլլայ, ուսուցչի հերոս 5-6 ամիս ամսական չափ և ձմեռուան մէջտեղը վարժարանը առանց վաւերանի թիւ ձեռքի ներքի չէ. Տնօրէնի մը կամ վարժուհիի մը դէմ եղած դժգոհութիւնը այդ միջոցներով գոհացում չի գտներ և տուժողը աշակերտները կըլլան. ու մանաւանդ օտար ստանձնութեան պատճառ կը տուի:

Խորհրդն իսկութիւնը պաշտօնական մարմնէն իմանալու բաղձանքով, սա միայն դիտել կուտանք թէ դպրոցական տարեշրջանի սկիզբին գործուած սխալը սրբագրելու համար՝ տարեշրջանին մինչև վերջը համբերել կը հարկադրէ երկրին օրէնքը. Շուվայիցիք այս համբերութիւնը ու

նենալ պարտին. ուրիշ ճար չկայ Գանտի մը տարի առաջ ալ նոյն փորձանքին Ռուսչուքցիք և Վառնացիք հանգիպած էին և նոյն համբերութեամբ միայն կրցին յաղթել. Այս դաս մը թող ըլլայ ուրիշ քաղաքներու ալ, որ սովորին թէ ուսուցչի չըմբռնելէ առաջ անոր անցեալը, կարողութիւնը և բնութիւնը լաւ քննել հարկ է:

ԱԶԴ

Անցեալ տարուէն ժեզ պարտք ունեցող մաս մը բաժանորդներէն կը խնդուի որ փութան իրենց պարտքը զրկել և չտարպեն մեզ մասնաւոր նամակներով դիմում ընելու:

Նոյնպէս կը խնդրուի մեր Տ. Գործակալներէն որ այլևս չը յապաղենք մեր իրենց քով ունեցած փրքերու և բաժնեգրիներու հաշիւները:

Խմբ. Իրաւունքի

ՊԱՐՍԿԱՀԱՅՔ

Ատրպատականի Առաջնորդ Տէր Կարապետ եպիսկոպոս, ծանօթ հոգեւոր, իզմիրեան Կաթողիկոսի հետ ունեցած տխուր փշաղէպով և իր դատապարտելի հրաժարագրով, վերագրած է իր թեմը ուր թեմական ժողով գումարելով ինքնարդարացումի խօսքեր ըրած է թէ, բայց պատգամաւորներու մէկ մասը զոհ չէ մնացած ու զանի պատասխանատու բռնել ուզած է. Սակայն թեմական ժողովը արգէն իր Առաջնորդին հրաժարականը մեծած ըլլալով այս անգամ ալ ինքիքիք պարտաւոր զգացած է անոր տուած կիսկատար բացառութիւններով գոցել խնդիրը. Ասոր վրայ Կարապետ եպիսկոպոս շնորհակալութիւն յայտնելով ժողովին, յուսադգրած է զայն որ ինքը ինչպէս ասկէ առաջ, այնպէս ալ յառաջիկային իր եռանդը չպիտի խնայէ և աւելի ևս սցեւորուած պիտի ջանայ կատարել իր ծանր պաշտօնը. ու պարտականութիւնը:

Ուրիշի Զանգի թղթակիցը հետեւեալը հաղորդած է.

Անցեալ Դեկտ. 20ին 2 հայ երիտասարդներ՝ մինը պարսկահպատակ, իսկ միւսը Տաճկահպատակ ինչ որ ընտանեկան գործով քաղաքից գնացել էին Նախիջևան Թափա հայ գիւղը և 2 օրից յետոյ վերադարձել էին Իսալու պարսկախառն հայ գիւղի վրայով դէպի քաղաք և զբաւել իրենց գործերով. Դեկ 22ին Իսալու պարսիկները միացած իրենց չըմբռնող 3-4 պարսիկ գիւղացիներին հետ, թափուել էին քաղաք և ամբաստանում էին այդ 2 հայ տղերքին մի պարսկուհի կոյս աղջիկ բռնաբարելու գործում, և խստիւ պահանջում էին արդարացի պատիւ, Շնորհիւ Պ. Ռ. Մովսիսեանի և Պ. Թորոս Յակոբեանի եռանդուն զմեռմանի ու ձեռք առած կարական միջոցներով, կազմեցաւ մի կա

նոնաւոր ատեան Դատաւորի մօտ, ներկայութեամբ Տաճկաց Ծախանդարի, Գարեգաղարի Անջումանի անդամների, վաճառականացեալի և այլոց: 6 1/2 ժամ էալ երկար ու բարակ հարցաքննութիւններէց յետոյ վերջապէս 2 հայ երիտասարդներն էլ արդարացան:

Չնայելով այդ ամբաստանութեան անյաշուղ վերջաւորութեան Դեկտ 26ին պարսիկները գիշերով յարձակեցին իսալու գիւղի հայերի վրայ թալանեցին 2 տուն և սպանեցին 55 60 տարեկան մի խեղճ հայ մարդ որի մեծ ընտանիքը մնում է անխնամ ու անմխիթար:

Դեկ. 29, 2000 թ. աւելի գինուած պարսիկներ նորից ուղ գիշերով յարձակոււմ են Դարուղը ասորիսխառն հայ գիւղի վրայ: Գիւղիս քեօխալ շատախօս Նիկոլան, որ այդ շրջաններում ամենազգեցիկ գիւղացին է, փախուած բայց նրա նորաձագ աղայ Մաթոսը և մի այլ գիւղացի. Էլվազ Նազարեանը հերոսաբար կուշտով յետ են մղում այդ ամբողջային ասպատակչներին և իրենց գիւղն աղատում:

Գործերի դրութիւնը չատ կողմերով գալիս է ապացուցանելու որ տեղիս աղանաններն են կուշտ կազմակերպողներն ու խուժանավարները. ընդդէմ քրիստոնեայ գիւղացիութեան, որոնք բռնմի համարձակութիւն են ունեցել բողոքել իրենց հարստահարիչ ախբարներ դէմ, այս վերջին սամանադարական կուշտների ժամանակ. Ինչպէս երևում է, չուտով էլ այդ կուշտը կը դառնայ մի կարգին բէակցիօնեական կուշտ բուրժուալերի և ֆեօդալների կողմից մղւած ընդդէմ քրիստոնեայ ազգայնականութեան, որ կողմնակից է սամանադարութեան Դըժբախտաբար պարսիկ գիւղացիները չհասկանալով այդ, կոյր գործիք են դարձել ֆեօդալների ձեռքին

40 Յունվ. 1911

ՀԱՅՔ ԵՒ ՍԵՐ ԷՏ. ԲԻՐՍ

Կ. Պոլիս հաստատուած ծանօթ փաստագրեալ է անգլ. քերթերու քղրակից Սր. Էսվին Բիրս Անգլիացի Հայաստան. «Գեօգր. Եւ Արմենիայի» վերջին քիւրի մեջ «Հայերն եւ իրենց ակնկալութիւնները» վերնագրով կարեւոր յօդուած մը սկսել, ուրիշ մեր ընթերցողներուն կ'ենկալացնեն հետեւեալ հաստատումները.

«Հայերուն կոցութիւնը տխուր և սակայն յուսալից է. Այս սոսկալի ձեռքան միջոցին ընդհանուր թշուառութիւն մը կը աշիւ, սակայն անընդհանրից յաջորդներուն կորովը պիտի կարողանէ զիրենք՝ յարատեւ աշխատութեամբ, իրենց և իրենց ընտանիքներուն կացութիւնը բարելաւել. Սահմանադրութեան հրատարակումը յոյս ներշնչեց անոր կեանքին մէջ. Հայերու կարգ մը ակնկալութիւններն արդէն իրականացան, յուսալի է որ շատ աւելի լուրջ ընդթ ունեցող բարեկարգութիւններ ևս իրականանան. Հայերն ուրախութեամբ որդեգրեցին երիտասարդ թուրքերու բրօքրամը. Պետութեան քրիստոնեայ տարրերուն մէջ ամէնէն աւելի իրենք են որ սիրալիւր յարաբերութիւններ կ'մշակեն իշխանութեան վրայ եղող կուսակցութեան հետ: Երկար չունչ մտաւ նրա Ապոլլոն - Համբար զանչեց եղաւ...»

«Իզմիրեանի մասն անակնկալ կերպով պատահեցաւ. 1895-7ի շարքերու միջոցին Պատրիարք էր, Սրբ. Ժիլը Բըրբը, որ այն ատեն մեր դեռ պատն էր, իր մասին ինձ խօսելով, նկատեց զայն անձնաւորութիւն մը որ մարտիրոսներու նկարագրով ձեռակերտուած էր. իր ժողովուրդին համար

ձեռքէն եկածը ըրաւ. Բոլոր դեպքան, ներուն ուշադրութիւնը Հայ ժողովուրդին տառապանքներուն վրայ հրաւիրեց. Հակառակ Ապոլլոն - Համբարի և իր համախոհներուն արգելքներուն՝ ան թալանեկան անարդարութիւններուն դէմ իրեն կերպով բողոքեց. Եթէ Արեւմտեան Պետութիւններու բարոյական օգնողականութիւնը չըլլար՝ վախ կար որ Համբար զոհն ըլլար:

Հայկական դաւաճանբու այսօրուան կացութեան վրայ ընդհանուր ակնարկ մը նետել վերջ Սրբ. Էսվին իր. յօդուածն ինտելեալ նշանակալից կերպով կը վերջացնէ.

«Հայաստանի մասին իմ հետեւութիւնս սա պիտի ըլլայ. թէ և թշուառութիւնը լայնածաւալ է, թէ և Հայերը ծանր կացութեան մը ենթարկուած են, թէ և քիւրտերու և ուրիշներու կողմէ կ'անիրաւուն սակայն կառավարութիւնը գիտէ թէ ինչ է արդարութեան պահանջը և կարելին պիտի ընէ արդարութիւնը գիտնալ հանելու համար: Անգլիացի ժողովուրդը լաւագոյն բանն ըրած պիտի ըլլայ իմէ աշխատել Հայ ցեղին կարօտութիւնները բառնալու. Ենթակցեալ թող ոչ մէկ պատանդութիւն կորսնցնէ իր համակրութիւնը յայտնելու այն ժողովուրդին որ պատուաւոր կերպով կ'պայքարի դժուարութեանց դէմ:

Բիւզանդիոն

ՏԵՂԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԸ

Հինգշաբթի օր՝ կրօնական և ազգային մեծ տօնին առթիւ՝ տեղւոյս եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ դպրոցական հանգէս մը ըստ պատշաճի. Շարք մը հայերէն երգերէ ու արտասանութիւններէ զատ, պուլկարերէն երգեր և արտասանութիւններ ալ տեղի ունեցան, որոնք անդիւք են եղեր ուսուցչաց և աշակերտաց 15 օրեւ յ պատրաստութեան, ինչպէս որ Չանոյց տէր Համադասպ հայրը բայց ցաւալին այն էր որ հանգէսը անշուք անցաւ արական սեռին, աննշան բացառութեամբ մը բացալիս յոթեան պատճառաւ: Երգերը բուական ներդաշնակ ելուցեցան իսկ արտասանութիւնները ոչ այնչափ յստակ առողջանութեամբ, այնպէս որ նախագահութիւններու շատերը անհասկանալի անցան կամ աղեցեալութիւն զուրկ:

Վարժարանին տնօրէնը, Տ. Մարկոս Թէրզեան զգալուն բանախօսութեամբ մը շնորհեց օրուան տօնին մեծ նշանակութեան վրայ վարդանանց զոհաբերութիւնը օրինակ առնելով, դրուատեց անձնազոհութեան գաղափարը և սա եղբակացութեան ուղեց հասնիլ թէ նուիրական իտեալներու համար անձնազոհութենէ չը խուսափող ժողովուրդ մը ցմիշտ ապրելու և յառաջդիմելու սահմանուած է. պատմական դարերու մէջ վարդանանք ծնող հայ ազգն ալ ցորչալի չէ դադարած Դորադոյն գիւցաղներ ունենալէ պիտի ապ

րի րնդ. երկար Մայր հայրենի քի ճակատագրական նոր բարեփոխութեան ընդհանուր խոսքերը, բնական թէ այլևս զէնքի յեղփոխութիւնը մէկ կողմէ թողած մտքի յեղփոխութեան ճամբուն վրայ մեր զոհաբերութիւնը պէտք է ցոյց տանք. վասն զի, ըստ այս ճամբուն մէջ եթէ զոհաբերութիւն յանձն չստանանք կորստելու սահմանում պիտի ըլլանք Կոչ ըրաւ անցողիկ կերպով եղբայրասիրութեան ու միաբանութեան:

Հանդէսին վերջին պահուն Տէր Համազասպ հայրը ևս նոյն նիւթին վրայ միեւնոյն ոգով քանի մը խոսք ընելով վերջնացուց:

ԱԶԳ. ՊԱՐԱՀԱՆԴԵՍԸ

Անցեալ կիրակի իրիկուն տեղի ունեցաւ Ազգ. վարժարանին ի նպատակ տարեկան Պարահանդէսը: Մէկ քանի վաճառականներու բախճան լանքովը օտարներու ալ բաւական տոմսակ վաճառուած ըլլալով, 1500 ֆր. չափ հասոյթ մը գոյացաւ:

Բայց սովորական դարձած ազգային մուրացկանութեան այս արդիւնքը չգոյցեր տարեկան պիտոճէին այն խոշոր բացը զոր ունի ներկայ թաղ. Խորհուրդը շնորհիւ իր քահանա կարգադրութիւններուն և ժողովուրդին մէկ ստուար մասը վշտացուած ըլլալուն:

Իրաց ներկայ վիճակը քանի մը ամիս ալ եթէ չարունակուի, ազգին անձնական զրամը կ'սկսէ կիսուած պիտի գտնէնք և կ'սկսէ ուսուցիչներուն քանի մը ամսական պարտական պիտի մնայ սգ. գային սնտո կը:

Այն ատեն է որ բուն պարը պիտի սկսի ոգեւորեալ:

Զինկեանէ չալար ֆիւրս օյնար.
Պէն պէտիլ օյնար ֆիւրս օյնար:

ԱԶԳԱՍԽԱՆԱՄԻ ՆՊԱՍԸ

Տեղւոյս Աղքատախնամ Ընկերութեան նպատակը տեղի ունեցաւ այս հինգշաբթի գիշեր Սեպտեմբերի 22-ին, յայտնում է, որ ի յիշատակ իր հանգուցեալ որդի Վարդան Ակիմեանի, յատկացուած է 30 000 ր. էլիմիանի ճեմարանին կից Մանկավարժական թանգարանի հաստատութեան համար: Այդ գումարից 25,000 ր. պիտի ծախսուի առանձին յարմար շէնք կառուցանելու համար Գեորգեան հոգևոր ճեմարանի բակում, իսկ մնացեալ 5000 բուրլով պէտք է գնվեն Մանկավարժական թանգարանի համար դպրոցական կահ կարասիքի և դասական պիտոյք ներքին շինքներ և ալլն:

Մանկավարժական թանգարանը պիտի լինի էլիմիանի վանքի սեփականութիւնը: Ամենայն Հայոց կաթողիկոսի իրաւասութեան տակ և ճեմարանի մանկավարժական խորհրդի ու վարչութեան ղեկա-

Ի Ր Ա Ի Ո Ի Ն Ք

Մշակի մէջ կը կարգանք թէ Պապուի փոխտարաններէն մէկը՝ յանուն Մ. Թ. Ղուկասեանի՝ պահանջած է անվաւեր ճանչնալ հանգուցեալ Աւետիս Ղուկասեանի կտակը: Կը կարծենք թէ այս այն կտակն է որով 4 միլիոն ֆր. կը յատկացուի Տաճկահայաստանի քաղաքներէն միոյն մէջ բարձրագոյն վարժարան մը հաստատելու:

Վիեննայի մէջ մեռնող Բոչիլտը կտակեր է բարեգործական զանազան գործերու համար 12 միլիոն գումար: Անոր ամբողջ հարստութիւնը 755 միլիոն ֆր. հաշուուած է:

Ամբողջ Մանչուրիան ժանդարմաւ վարակուած զօրքերն ալ ժանդարմէն կը հիւանդանան ու կը մեռնին եղեր:

Նիւ-Եօքէ կը գրեն թէ քառասուն թօնօ ուժանակ պայթեցաւ Նիւ Ճորճիի ծովափին վրայ փրտը: 1/2 կեանքի քստմնելի կուրուստներ պատճառելով: Պայթումը մը ցնցած է եռեսուն մղոն տրամագծի մը մէջ գտնուած Բոլոր վայրերը: Պայթումը պատահած տեղին փճացումը այնչափ կատարեալ եղած է, որ հետք մը չէ մընացած ցոյց տալու թէ քանի հոգի մեռեր է ինչ: Մարդկային մարմնոյ կտորներ, քանք, ոտք, սրունք կը գտնուին այս ու այն կողմ նետուած Պայթած մեծաքանակ ուժանակը փոխադրողները մեծ մասամբ Բոլոնիացիներ են եղեր: Մարդկային կորուստի թիւը որոշել անկարելի ընդած է ցարդ:

Մշակ կը գրէ

Տիկին Վ. Բանանեան, մի նամակով ուղղված Բագրատ վարդապետ Վարդապետեանին, յունվարի 22-ին, յայտնում է, որ ի յիշատակ իր հանգուցեալ որդի Վարդան Ակիմեանի, յատկացուած է 30 000 ր. էլիմիանի ճեմարանին կից Մանկավարժական թանգարանի հաստատութեան համար: Այդ գումարից 25,000 ր. պիտի ծախսուի առանձին յարմար շէնք կառուցանելու համար Գեորգեան հոգևոր ճեմարանի բակում, իսկ մնացեալ 5000 բուրլով պէտք է գնվեն Մանկավարժական թանգարանի համար դպրոցական կահ կարասիքի և դասական պիտոյք ներքին շինքներ և ալլն:

Մանկավարժական թանգարանը պիտի լինի էլիմիանի վանքի սեփականութիւնը: Ամենայն Հայոց կաթողիկոսի իրաւասութեան տակ և ճեմարանի մանկավարժական խորհրդի ու վարչութեան ղեկա-

Վարժարան ներքոյ

Այս Մանկավարժական թանգարանի նպատակը պէտք է լինի նպատակը Հոգևոր ճեմարանի ուսանողներին և մեր եկեղեցական ծխական դպրոցների ուսուցչուհիներին մանկավարժական կրթութեան գործին:

— Ֆրանսացի աշխարհահռչակ դերասանուհի Օռա Պէռնայի խումբը վերջերս Նիւ-Եօքէի մէջ կարգ մը ներկայացումներ տուած է, որոնց մէջ նաեւ «Սամարուհին»: Բայց այս խաղը կրօնասէր ամերիկացիներուն շնորհաբանութեան վրայ գէշ ազդած է և բուն բողոքներու տեղի տուած է: Մեզի համար այս իրարանցման էն շահագրգռական կողմը հոն է որ այդ յուզման բուն առիթ տուող գերը կատարողը եղած է Հայ մը Տ. Մագսուտեան, որ Բրիտանիա գերը կատարած է «Սամարուհին» խաղին մէջ:

Տ. Մագսուտեան բնիկ Ջիւնիացի է, 30 տարեկան և 12 տարեկանէն ի վեր կը գտնուի Ֆրանսայի Իր ասպարէզին պատրաստուած է Բարիզի Գեոմետրիա և Կառնի մէջ և յետոյ Օտենի թատերաբեմն ելլելով յոյժ գնահատուած է և չորս տարեկէ ի վեր Սառա Պէռնայի խումբին մէջ է ու միասին կը շրջագայի աշխարհի ամէնէն աւելի զարգացած մասերը:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԻՒՆԸ

Լուսաբեր-Արեւի մէջ կը կարգանք «Կիրակի օր, Պուլգի Ազգ. Առաջնորդարանի ժողովարարին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական բացումը Հանգուցեալ Գրիգոր Մէօթէմէտեանի կրտակին: Ինչպէս յայտնի է, անցեալ տարի Մերոնի բարերարը Հայկական Ընդ. Միութեան կտակած էր 3000 ոսկի արժողութեամբ 3 կտոր հող:

«Կտակին ընթերցումը տեղի ունեցաւ Առաջնորդարանի Դիւանապետ Տ. Նազարէթ Աղազարի կողմէ, ի ներկայութեան Առաջնորդ Սրբազանին, քաղաք ժողովի անդամներուն, Հանգուցեալի ժառանգորդներուն, Միութեան կեդր. ժողովի ներկայացուցիչներուն և վկաներու:

«Ընթերցումէն վերջ ժառանգորդները ստացան մը ևս յայտարարելին թէ կը հաստատեն կտակը, իսկ Միութեան

ներկայացուցիչները յայտնեցին թէ սիրայօժար ընդունած են կտակը և յանձնառու են Բարերարին կամքը կէս առ կէս գործադրել:

«Յետոյ, Սրբազանը հողոց արտասանեց՝ Հանգուցեալին յիշատակը օրհնելով, և բոլոր ներկաները յոտնկայս շնորհակալութիւն յայտնեցին Մէօթէմէտեան ժառանգորդներուն իրենց ցոյց տուած ազնուութեանը համար:

«Մէօթէմէտեան եղբայրները 30 ոսկի գումար մը ևս նուիրեցին այս առիթը Հայկ. Միութեան:

— Աղէքսանդրիոյ ծանօթ բարերար Արամ փաշա Բարթողի գրաւոր դիմումին վրայ՝ Բարձր. Խաղվը բարեհաճած է իր հովանաւորութիւնը չընորհել ազգային շքեղ երեկոյթի մը որուն հասոյթը կէս առ կէս պիտի բաժնուի Միացեալ ընկերութեանց և Ազգանուէր Հայուհեաց ընկերութեան միջև:»

ԱԶԳԱՅԻՆ

Պատր. Տեղապահ Տ. Վահրամ եպ. Մանկունի իր պաշտօնական առաջին այցելութիւնները տուաւ նախարարներուն, որոնց աշակցութիւնը ու բարեհաճութեամբ իրաւիկեց հայ ժողովուրդին տառապանքը մեղմելու բընոյթ ունեցող և ցարդ առկա մնացած գործերու մասին: Ըստ թրքական քաղաքավարութեան խոստումներ չստացուեցան Տեղապահին:

Օսմ. Երեսփ. ժողովոյ նախագահ Անմէտ Բիզա պէյ Տեղապահին այցելութեան միջոցին ըստ թէ կտակաւորութիւնը շնորհապէս կը գնահատէ Հայոց հայրենասիրութիւնը, խօսքով այո՛, բայց գործով ընդհակառակը: Համբաւեան շարքերը արդարացեալ Մեծիկեթի այդ նախկին խմբագիրը ազնուանք վարժարան մը բանալը յայտնելով, հոն ա. մէն ազգերու լեզուն ու կրօնքը աւանդել որոշուած է ըստ, և առաջարկեց որ Տեղապահ սրբազանը ըստ անձնէ հայաշէկներու կրօնքի դասը: Վահրամ Ս. խոստացաւ Պատրիարքարանէն ձեռնհաս եկեղեցական տը դասախօս կարգել:

— Անտիոքէն սրտամտիկ լուրեր կը հասնին տեղւոյն արկածեալ ազգայնոց չքաւորութեան մասին, որ աւելի շեշտուած է ձմեռուան սաստկութեան պատճառաւ, կառավարութիւնը բացարձակապէս անկարելի կը գտնուի շարքէն մաղապուր պրծող այդ որբացեալ հայերուն:

— Էլիմիանի երեցագոյն միաբանը, Տ. Մեսրոպ արքեպ. Սմբատեան վախճանած է Երուսաղէմի մէջ:

— Կիլիկիոյ Ս Վաթիկոսը պատասխանելով Պատրիարքարանի հարցման Ատանայի վերջին չփոթութեանց նրկատմամբ ըսեք է թէ կուսակալին ջանքերով ո՛ր է անախորժութիւն չպատա-

ՏՊԱՐԱՆ «ԻՐԱՒՈՒՆՔ»

ԿԸ ՏՊԱՐԱՌՈՒՄԻ ՄԱՐՈՒՆ ԵՒ ՁԱՓԱՌՈՒ ՊԻՆԵՐՈՎ
ԱՄԵՆ ՏԵՍԱՆ ՊԱՐՏԵՐ

Հարսանեկան Հրախրագիր, Այցատոմս, Նամակագրութիւն, Պահարան
Պարսամուրհակ, Հաւելիքներ և ուրիշ գործեր

Հայերէն, Պոռնիկաբերէն, Ֆրանսերէն և Ռումաներէն

Մեզ դիմողներու ճաշակին գոհացում տալու համար Տպարանս նոր
բերել տուած է ամէնալիւրջին սրտեմբ
գործիքներ և տառեր

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ԿԸՆԴՈՒՆՈՒՆ ԿԱՆՈՒՎԱԾԱՐՈՎ ՄԸ

